ԼՐԱՏՈՒ ХРОНИКА

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԱՐԵԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ

Մարտի 30—31-ը Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի նիստերի դահլիճում տեղի ունեցավ Հանրապետության գիտությունների ակադեմիայի տարեկան ընդհանուր ժողովը, որը քննարկեց ակադեմիայի 1975 թ. աշխատանքի արդյունքները և այն խնդիրները, որ այսօր դրված են Հանրապետության գիտնականների առջև։

Ներածական խոսքով հանդես եկավ ակադեմիայի պրեզիդենտ, ակադեմիկոս Վ. Հ. Համբարձումյանը։ Նա ընդգծեց, որ այս տարի ժողովը տեղի է ունենում նշանակալի ժամանակներում՝ ՍՄԿԿ XXV համագումարի աշխատանքն ավարտվելուց անմիջապես հետո։

— Համագումարի նյութերում և առանձնապես ընկեր Լեոնիդ Իլյիչ Բրեժնևի փայլուն, բովանդակալից զեկուցման մեջ հստակորեն ձևակերպվեցին մեր հասարակության կյանքում գիտության դերն ու տեղը։—Մենք քաջ գիտենք,— ասաց ՍՄԿԿ Կենտրոնական կոմիտեի գլխավոր քարտուղարը,— որ գիտատեխնիկական առաջընթացի ջրառատ հոսքը կցամաքի, եթե այն մշտապես չսնուցվի ֆունդամենտալ հետազոտություններով։ Նաև ընդգծվեց, որ միայն գիտության ու տեխնիկայի արագ զարգացման հիման վրա կարող են լուծվել սոցիալական հեղափոխության վերջնական խնդիրները՝ կարող է կառուցվել կոմունիստական հասարակարգ։

Իններորդ հնգամյակի տարիներին, շարունակեց Վ. Համբարձումյանը, Հայաստանի գիտությունների ակադեմիայի գիտական կոլեկտիվները զգալի հաջողություններ հասան ֆունդամենտալ և կիրառական գիտությունների մի շարք բնագավառում՝ ֆիզիկայի, մաթեմատիկայի, մեխանիկայի, աստղաֆիզիկայի, քիմիայի, երկրաբանության, կենսաբանության, բիոքիմիայի, հասարակական գիտությունների գծով։

Դրա հետ մեկտեղ, նշեց ընկ. Վ. Հ. Համբարձումյանը, մեր ակադեմիայի գործունեության մեջ կան լուրջ թերություններ։ Հարկավոր է ավելի վճռականորեն պայքարել մանրաթեմայնության, ուժերի ու միջոցների փոշիացման դեմ, հստակորեն սահմանել գիտական հետազոտությունների հիմնական ուղղությունները։ Դա առանձնապես կարևոր է այժմ, տասներորդ հնգամյակի սկզբին, երբ Հայաստանի գիտության, ինչպես նաև ամբողջ ժողովրդական տնտեսության առջև դրված են նոր պատասխանատու խնդիրներ։

Վերջում ակադեմիկոս Վ. Հ. Համբարձումյանը համառոտակի կանգ առավ այն գիտական ուղղությունների վրա, որոնք առանձնապես հեռանկարային են մեր հանրապետության համար։

Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի գործունեության հիմնական արդյունքների մասին զեկուցումով հանդես եկավ ակադեմիայի նախագահության գլխավոր գիտական քարտուղար, ՀՍՍՀ ԳԱ թղթակից-անդամ Ս. Ա. Բակունցը։

Զեկուցման շուրջը ծավալվեց մտքերի փոխանակություն, որին մասնակցեցին Հանրապետության գիտությունների ակադեմիայի ակադեմիկոսներ Ա. Ռ. Հովհաննիսյանը, Ա. Բ. Նալբանդյանը, Մ. Գ. Ներսիսյանը, Ս. Մ. Մերգելյանը, ակադեմիայի թղթակից-անդամներ Ա. Տ. Ասլանյանը, Մ. Լ. Տեր-Միքայելյանը։

Ընդհանուր ժողովում տեղի ունեցավ Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի պարգևագրերի ավանդական ամենամյա հանձնումը։

Ժողովի եզրափակիչ նիստում գիտական զեկուցումներով հանդես եկան ակադեմիկոս Մ. Ք. Զալալովյանը և ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Հ. Խ. Բունիաթյանը։

Գիտությունների ակադեմիայի բաժանմունքների նիստերում, որոնք տեղի ունեցան մարտի 25—26-ը, քննարկվեցին բաժանմունքների գիտական հիմնարկների 1975 թ. գործունեության հիմնական արդյունքները և մի շարք գիտական զեկուցումներ։

Ընդհանուր ժողովին մասնակցում էին ՀԿԿ Կենտկոմի առաջին քարտուղար Կ. Ս. Դեմիրճյանը, ՀՍՍՀ Գերագույն սովետի Նախագահության նախագահ Բ. Ե. Սարկիսովը, ՀԿԿ Կենտկոմի քարտուղար Կ. Լ. Դալլաքյանը, ՀՍՍՀ Մինիստրների սովետի նախագահի առաջին տեղակալ Գ. Ա. Մարտիրոսյանը, ՀԿԿ Երևանի քաղաքային կոմիտեի առաջին քարտուղար Լ. Ն. Ներսիսյանը, ՀՍՍՀ Մինիստրների սովետի նախագահի տեղակալ Ռ. Ք. Սվետլովան, ՀԿԿ Կենտկոմի գիտության և ուսումնական հաստատությունների բաժնի վարիչ Յա. Ի. Խաչիկյանը։

Հ. ՍԻՄՈՆՅԱՆ